ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՈՒՌՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ, Ուռուտ համայնք
հեռ. 0256 6 07 08

27.12.2016թ
Ե-78

Լոռու մարզպետ
Պ-րն Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Ուռուտ համայնքի ավագանու թիվ 28,29 որոշումները:

Համայնքի ղեկավար Ս. Զուլհակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՈւՌՈւՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ, Ուռուտ համայնք
հեռ. 0256 6 07 08

ՈՐՈՇՈՒՄ թիվ 28
15 դեկտեմբեր 2016թ

Դպրոցի նախակրթարանի և 1-4րդ դասարանների աշակերտներին ամանորի կապակցությամբ նվերներ տալու մասին.

Համայնքի ավագանին որոշում է.

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 20 կետի պահանջներով <<Այլ մշակութային կազմակերպություններ>> հաշվի 4239 հոդվածից 200000դրամ և 4269 հոդվածից 250000դրամ փոխանցել համայնքում ամանորի միջոցառում կազմակերպելու, նախակրթարանի և 1-4-րդ դասարանների աշակերտներին նվերներ տալու համար:

| Ավագանու անդամ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բարսեղյան Շամիր | | | |
| Գաբրիելյան Ասուն | | | |
| Պապյան Հարություն | | | |
| Պապյան Գեղամ | | | |
| Զուլհակյան Մանվել | | | |

Համայնքի ղեկավար Ս. Զուլհակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՈՒՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ, Ուռուտ համայնք
հեռ. 0256 6 07 08

ՈՐՈՇՈՒՄ թիվ 29
15 դեկտեմբեր 2016թ

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին.

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014թ նոյեմբերի 25-ի << ՀՀ օրենսդրությամբ Ուռուտ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 21-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Ուռուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները: